Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Բազմաղբյուրի Ն.Սաֆարյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Առարկա՝ Հայ գրականություն

Թեմա՝ Բնություն և մարդը Համո Սահյանի ստեղծագործության մեջ

Վերապատրաստող, մենթոր՝ Նարինե Մեսրոպյան

Ուսուցիչ՝ Արմենուհի Ղազարյան

Աշտարակ 2023

ԹԵՄԱՅԻ ՆՊԱՏԱԿԸ

Ձևավորել գիտելիքներ Սահյանի կյանքի, ապրած ժամանակաշրջանի, ստեղծագործությունների, բնապաշտության, մարդու՝ բնության հետ անբակտելի կապի և նրա հետ հավերժ ձուլման մասին:

Սովորողի մոտ զարգացնել գեղարվեստական ճաշակ, պատկերավոր մտածողություն, Հայրենի բնության միջոցով մարդուն՝ հային ճանաչելու կարողություն:

Սովորեցնել սիրել, պահպանել բնությունը և հոգ տանել նրա մասին:

Հետազոտությունն ունի իմացական, ճանաչողական, դաստիարակչական նշանակություն:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ուսումնասիրել Համո Սահյանի պոեզիայի առանձնահատկությունները:

Սովորողների հետ վերլուծել բնություն–մարդ անբակտելի կապն արտացոլող բանաստեղծություններից մի քանիսը:

Բանաստեղծությունների օրինակներով բնության մեջ տեսնել մարդուց փոխառված հատկանիշները՝ բարությունը, հյուրընկալությունը (<<Քարափը>>)ուժը, ամրությունը, համառությունը (<<Մասրենին>>):

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բնության և մարդու կապը միշտ արդիական է, քանի որ մարդն էլ բնության մասնիկ է: Այսօր, էկոլոգիայի պահպանությունը համաշխարհային մակարդակի խնդիր է դարձել: Մարդիկ մշտապես օգտվելով բնությունից, երբեմն սեփական շահից ելնելով՝ անխնա ոչնչացնում է այն, աղտոտում, և այդ աղտոտված բնությունը իր պատասխան հարվածն է հասցնում մարդուն՝ զանազան հիվանդությունների տեսքով: Ու այդ խնդրի լուծումը պահանջում է յուրաքանչյուրիս սրտացավ վերաբերմունքը մեզ շրջապատող բնության հանդեպ: Սահյանի գրչով նկարված խոսուն, անձնավորված բնապատկերները մարդուն ստիպում են վերանայել իր վերաբերմունքը բնության հանդեպ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համո Սահյանը 20-րդ դարի երկրորդ կեսի հայ բանաստեղծության ամենապայծառ անհատականություններից է:

Համեմատաբար ուշ մտնելով գրական ասպարեզ՝ պատերազմից հետո, նա տպագրել է մի շարք գրքեր՝ <<Որոտանի եզերին>>(1946 թ), <<Բարձունքի վրա>>(1955) <<Նախրյան դալար բարդի>> (1958թ) <<Մայրամուտից առաջ>> (1964թ) <<Քարափների երգը>> (1968) <<Սեզամ բացվիր>> (1972թ) <<Դաղձի ծաղիկը>>
(1986):

Նրա ստեղծագործության մեջ կենտրոնականը հայրենիքի և բնության թեման է:

Նա ստեղծեց քարափների, ջրվեժների ու ծիածանների մի գունեղ աշխարհ, ուր ապրող մարդը ևս օժտված է իրեն ծնող միջավայրի պարզությամբ ու խորությամբ:

<<Ինչ գրել եմ, բոլորն էլ իմ զավակներն են: Ինչքան էլ կակազ լինեն, խուլ կամ կաղ հարգատ են ու գալու են իմ թաղմանը: Սակայն ավելի արժեքավոր եմ համարում <<Քարափների երգը>>.....Այնուհիմ միակ ու հիմնական ակունքն է: Ինձ համար աշխարհն ու տիեզերքը տեսնելու ամենաբարձր ու հուսալի դիտակետը: Նաև այն հավելյալ իրականությունը, որ պահպանել է իմ ինքնությունը այս խառն ու խրթին աշխարհում....>>:

Մեծ բանաստեղծը իր քնարերգության անդաստանը հարստացրեց ոչ միայն բոլորիս հայտնի ծաղկի, ուրցի, հացի հոտով, ոչ միայն շատերին պակաս ծանոթ մոր ծոցի, վարող-ցանող հոր ձեռքերի, տոհմածառի կամ արևի, բարձունքի, լույսի, ամպրոպի, մամուռի, անձավի, քամու, քարայծի կճղակի հոտով, այլ ավելի դժվար ըմբռնելի՝ մորմոքի, արցունքի, մութի, նաև՝ սարսափի, խեղճության, տխրության հոտով և, վերջապես, ինչպես բանաստեղծն է գրում՝ «հոտեր, հոտեր, որ անուն չունեն»: Այս ամենը, բնականաբար, մարդու հոգում արթնացնում է ոչ միայն բնության եւ մարդու փոխհարաբերության շեշտված զգացողություններ, այլ նաև խոհափիլիսոփայական բանաստեղծության այնպիսի տեսակ, որ մինչ այդ գոյություն չի ունեցել հայ քնարերգությանմեջ:

ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԱՐԴԸ ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայ մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանն ասել է. <<Մարդը բնություն է, բնությունը՝ մարդ>>:

Համո Սահյանի պոեզիան դրա վառ արտահայտությունն է: Բանաստեղծը երկար ճանապարհ է անցել՝ իրեն բնության մի մասնիկ զգալու և նրա հետ ու նրա միջոցով հավերժանալու համար: Սահյանը խոստովանել է, որ, սկզբում նա բնությունը տեսել-զգացել է իր միջոցով:

Աչքն ու ականջն եմ ես մայր բնության,

Գիտակցությունը նրա մարմնավոր,

Հասակակիցն եմ նրա հնության,

Եվ ծլարձակումն ու ծաղկումը նոր,

Նրա այս մի բուռ պատկերն ու նրա

Հավիտենության աղերսանքն եմ ես: Քննադատ Սուրեն Աղաբաբյանին նվիրված <<Թե ով եմ և ինչ >> բանաստեղծության մեջ Համո Սահյանը իր բանաստեղծության հենքը համարում է բնության հետ նույնացումը:

Բնությունը Սահյանի բանաստեղծության հողն է, որտեղից գրողը վերցրել է բանաստեղծության գույներն ու ձևերը:

Սահյանի պատկերած բնաշխարհում մարդը, հողը, կենդանին, քարափը ներդաշնակության մեջ են և լրացնում են միմյանց:

Բուսական աշխարհի մեջ առանձնանում են անտառը, ծառերը՝ բարդին, փշատենիին, կաղնին, եղևնին: Այս ամենից առանձնանում է մասրենին: Բանաստեղծը իրեն համեմատում է մասրենու հետ(<<Մասրենի>>).

Աշխարհի չարից փախած,

Խոկում ես բոլոր տարին,

Լուռ ու մունջ նստած քարին,

Ոտքերդ քարից կախած:

Ոչ մեկին նեղում ես դու,

Ոչ մեկից բան ես խնդրում,

Ոչ մեկի ջուրն ես կտրում.

Ոչ մեկին շեղում ես դու;

Ծաղկում ես ամեն տարի,

Բուրմունքդ հովին տալով,

Նեկտարդ մեղվին տալով,

Պտուղդ՝ ում պատահի;

Խփում է ցուրտը ձմռան,

Մտնում ես քո ներսը դու...

Տեսնում ես, թե ես ու դու

Ինչքան ենք իրար նման:

Մարտիրոս Սարյանին ընծայած <<Մասրենի>> բանաստեղծության մասին Սահյանն ասում է. << Մասրենին իմ երկրի կերպարն է: Ոչինչ չի ուզում, երաշտ տարին էլ լավ պտուղ է տալիս, մի քանի անգամ ժաղկում՝ կանաչում է, սպիտակում, դեղնում, կարմրում...Խեղճ, բաշխող, բայց և փշեր ունի:

Օտարն ինձ պիտի ճանաչի մասրենու թփով՝ ժայռի մեջ խրված: Ամենալավ բույրն ունի, գույնն ունի, պտուղն ունի: Արմատը խոր, պիրկ, ամուր, հապա փորձիր պոկել...

Մասրենին ինքը չգիտե, որ այդքան բուժիչ է, այդքան գեղեցիկ, այդքան պիտանի:

Մասրենին չգիտի և չէր էլ կարող իմանալ, որ ինքը հայ է, հայի բնավորություն, որ այնքան բնորոշ է մեր ազգին:

Դա մենք պիտի իմանանք և ներկայացնենք այլոց էլ,

Մասրենին Թումանյանի ժայռի արժեքն ունի....

Մասրենու էությամբ պիտի նաև ինքներս մեզ ճանաչենք>>:

.....Ցուրտ քամիներն են ոստրերը քրքրել,

Հողմերն են ծեծել բոլոր կողմերից,

Բայց նա ժեռ քարից սնունդ է առել,

Եվ ջուր է առել խոնավ հողմերից:

Դիմացել է պիրկ պարանի նման,

Արմատով կառչած քարե երկնքին,

Շյուղեր է տվել և ամեն գարնան

Քնքշորեն ծաղկել, բուրել է կրկին:

Կախվել է ժայռը անդունդի վրա....

Եվ հավիտյան էլ կախված մնա թող,

Քանի քարեղեն զանգվածը նրա

Մասրենու համար երկինք է և հող:

«Մասրենին» և «Ժայռից մասուր է կաթում» բանաստեղծությունների մեջ հասարակ թուփը մեկնաբանված է ամրության, կամքի և գեղեցկության ցուցիչներով: Բայց լավագույնը թերևս «Անտառում» բանաստեղծությունն է՝ անձնավորման տարերքով. անտառային ձայներով, բույրերով ու գույներով, գոյության հավասարազոր կերպարներով. Անգամ անշունչ երևույթները անձնավորված ու ապրող են, և այս ամենը իսկապես շատ խորհրդավոր է, համահունչ՝ «անտառում խորին խորհուրդներ կային» մտքին.

.....Օրոր էր ասում աշունն անտառին.

Բայց դեռ անտառի քունը չէր տանում.....

Եղյամն էր սունկի գլուխն արծաթում,

Մրսում էր կարծես վայրի ճեճին,

Հանգստանում էր հողմը բացատում՝

Ականջն ամպրոպի ազդանշանին:

Համո Սահյանի բանաստեղծություններում լիարժեք <<գործող անձիք>> են բնության տարրերը՝ անձրևը, կայծակը, ծառը, քարը , գետը և այլն: Դրանք ներկայացվում են մարդկային բարոյական ինչ-ինչ արժեքների դերով՝ բարության, գեղեցկության, վեհության: Եվ այս նյութերի գերխնդիրը մարդկային ապրումների արտահայտումն է: Մարդը և բնությունը հաճախականորեն փոխում են իրենց դերը. Մարդը դառնում է բնություն, բնությունը՝ մարդ

Դրանք ներհյուսված են իրար մեջ՝ անորսալի, հաճախ անթափանցիկ կապերով, սահմաններով: Բերենք մի օրինակ.

Ջրվեժի ծիծառ, մամուռի արցունք,

Հավքերի երամ, ժայռեր ծանր ու մեծ,

Ամեն ինչի մեջ ինձանից մասունք,

Եվ ամեն ինչից մասունք կա իմ մեջ:

Սահյանն ավանդական ձևով բնությունը չի մարդկայնացնում, չի դիմում ընդունված փոխաբերությունների, նրա միտքը թափանցում է սովորական աչքին արդեն տեսանելի սահմաններից այն կողմ, դեպի հիմքը, դեպի կեցության փիլիսոփայական բջիջը, որն ինքնին, իր ծավալումների, իր բազմակերպ հոսքերի մեջ խտրականություն չի դնում, դրանով իսկ հաստատում է մի անսովոր եղբայրություն, հոգևոր իմաստով մի ինքնատիպ թագավորություն: Այս տարերքը թափանցում է նույնիսկ բանաստեղծության տեսության մեջ և դրանով Համո Սահյանի գեղագիտությունը ձեռք է բերում անաղարտ ակունքներ:

Սահյանի լավագույն էջերից է «Քարափների երգը» ժողովածուի առաջին բանաստեղծությունը, որ վերնագրված է «Լուսաբաց»: Լույսի հպումից շարժվում ու արթնանում է ամբողջ բնությունը, սարսուռ են ապրում նրա բաղադրիչները, արթնանում է նաև ժամանակը, որը չափվում է դարերով.

Լույսը առավ սարին,

Սարսռում է սարը,-

Սարերը վեր թռան:

Հավքն արթնացավ ծառին,

Սարսռում է ծառը,–

Ծառերը վեր թռան:

Քարայծն ելավ քարին,

Սարսռում է քարը,–

Քարերը վեր թռան...

Եվ ինձ մի պահ թվաց՝

Քարերի տակ քնած

Դարերը վեր թռան:

Ներդաշնակ մարդու որոնման տեսակետից շատ իմաստալից է <<Բնություն>> կոչված բանաստեղծությունը, ուր կան այսպիսի տողեր.

Ես ծունկի եմ գալիս,

Խոնարհվում եմ ահա,

Ասա, ինչ որ կուզես....

Օգնիր ինձ՝ իմանամ,

Ինձ քեզանից զատեմ

Ու խառնվեմ քեզ հետ:

...Օգնիր՝ ամբողջանամ:

Այն հարցին, թե ինչու «քարափների երգը» սկսվել ու չի ավարտվում, Համո Սահյանը պատասխանել է. ««Քարափների երգը» բնության մարդկայնացման և մարդու բնականացման խնդիրն է, որն արվեստի մեջ երբեք չի ավարտվելու, իսկ ինձ համար այն ավարտվելու է իմ կյանքի հետ» (Համո Սահյան, Գրչի, խոսքի, խղճի կշիռը, էջ 176) Սահյանի գործերում սփռված են բնության տարրերի մարդկայնացման՝ անձնավորման կամ

դիմառնության հարյուրավոր դեպքեր: Գետը՝ Որոտանը, բանաստեղծի հարազատ եղբայրն է: Եղեգը մարդահասակ է: Ձորը ուզում է կուլ տալ արեգակին, սա խաբում է ու հեռանում, և ձորը խռովում է: Քամին համբուրում է տերևին և ծիծաղում անտառի վրա («Քամու համբույրը»): Փոքրիկ տերևը ալեկոծում է մի ողջ անտառ: Աշունն անտառին օրոր է ասում: Կաղնին Սողոմոն իմաստուն է: Այս երևույթի բացատրությունը Սահյանը փորձել է տալ նաև բանաստեղծությունների մեջ: «Որոնում եմ ես» ծրագրային ծավալուն բանաստեղծության մեջ նա բացում է որոշ փակագծեր: Մարդիկ զարմանում են իր արտասովոր արհեստի վրա, թե ինչպես է ինքը բարափը դարձնում պոզավոր մի եզ, ամպը՝ հարսնացու աղջիկ, լեռնային գետը՝ նժույգին նստած հեծյալ: Ուրեմն՝ բանաստեղծի արհեստը բնության մարդկայնացումն է: Բայց սա ընդունելուց հետո Սահյանը նաև բացատրում է, որ դրանով ինքը որոնում է իրեն, առհասարակ մարդուն. Բայց ես նրանց մեջ ինձ եմ որոնում, Ձեզ եմ որոնում: Որոնում եմ ես Ոտքերը հողոտ, ճակատն արևոտ, Իմ սրտի ուզած մարդամոտ մարդուն...

Մարդու ճանաչումը բնության միջոցով

Հարցազրույցներից մեկում, հերթական անգամ խոսելով բնության ու մարդու խորը փոխառնչության մասին, Համո Սահյանը հետաքրքիր զարգացում է տեսնում իր պոեզիայում: Ըստ դրա՝ ինքը նախկինում բնությունը ճանաչում էր իր միջոցով, իսկ հիմա իրեն է ճանաչում բնության միջոցով: Եթե առաջ գրում էր «լեռան ճակատ», հիմա մարդու կրծքի մասին ասում է «լանջ» («Գրական թերթ», 1978, թիվ 26): Զմռռանանք, որ բանաստեղծը բարափի միջոցով է ճանաչում ոչ միայն ինքն իրեն (բարափի զուգաճորդ, բարերից բուսած բանաստեղծ), այլև իր ինքերգության կենտրոնական հերոսին՝ պապին: Սահյանը ունի այս երևույթի խորը ըմբռնումը, նույնիսկ

ծրագիրը: «Դու փոխ ես տվել» բանաստեղծությունը ծավալուն երկխոսություն է խելոք ու խոհեմ մայր բնության հետ, որին կոչում է «ամենահին ու ամենանոր ամենապոեմ»: Նա է բանաստեղծին փոխ տվել իր աչքերը, ձեռքերը, ոտքերը, ականջները, սիրտը՝ ինքն իրեն՝ բնությանը, ճանաչելու համար.

Դու փոխ ես տվել իմ այս աչքերը,

Որ դու նրանցով ինքդ քեզ նայես...

Բնության մարդկայնացման և մարդու բնականության զուգորդումը նույն բանաստեղծության մեջ: Այս համադրությունը Համո Սահյանի գեղագիտական երազանքն է: «Անձնավորված, մարդացած բնություն և բնական մարդ. ահա իմ հավատս հանգանակը կյանքում և արվեստում»,- մի առիթով ասել է նա (Համո Սահյան. Բանաստեղծը, մտածողը, մարդը, էջ 249): Հավասարազոր երկու եզրերի զուգադրումից Սահյանի պոեզիայում ծնվել են մի քանի փայլուն բանաստեղծություններ, որոնք արդեն արվեստի կայացած փաստեր են և կարիք չունեն հեղինակային հավելյալ բացատրությունների: Ահա «Քարափների երգը» ժողովածուի «Իջավ սարյակը դաշտում» բանաստեղծությունը.

Իջավ սարյակը դաշտում- ծիլ էր կտուցին.-

Շուրթիս վրա մի կանաչ տող էր թպրտում:

Արտից տատրակը թռավ- հասկ էր կտուցին.-

Շուրթիս վրա մի կարմիր տող էր թպրտում:

Ծիծառն անցավ երկնքով- ամպ էր կտուցին.-

Շուրթիս վրա մի դեղին տող էր թպրտում:

Կռռաց ագռավը ձորում- ձյուն էր կտուցին.-

Սրտիս վրա մի ճերմակ դող է թպրտում:

Մի ամբողջ կյանքի պատմություն ամփոփված է ութ տողերի մեջ: Մի որոշ իմաստով կարելի է մտածել, որ այս բանաստեղծությունն ունի ընդամենը երկու տող, որի միայն որոշ բառեր են փոխվում: Ադամանդյա այս սեղմության մեջ կան նաև չասված բառեր, երևույթներ ու կերպարներ: Գլխավոր կերպարը մարդն է, բայց նա սովորական էակ չէ, այլ բանաստեղծ. դա մենք զգում ենք «տող» բառից: Տրված է մարդու կարճատև կյանքի ընթացքը տարվա եղանակների արագ հերթագայությամբ, բայց չկան գարուն, ամառ, աշուն, ձմեռ բառերը. դա էլ կուահում ենք կանաչ-կարմիր-դեղին-հերմակ քառանիստ գունապատկերից: Բանաստեղծության եզրափակիչ մասում կա վախճանի, մահվան գաղափարը, իսկ դրա մասին ասում է երիցս հնչած «տող» բառի հետ վերջում ներքին հանգ կազմող «դող» բառը: Այս և դեռ ուրիշ ենթիմաստներ թաքցնող այս բանաստեղծությունը զուգահեռականության ծնունդ է, բնապատկերային չորս թռչուն-խորհրդանիշերի (սարյակ, տատրակ, ծիծառ, ագռավ) և բանաստեղծ մարդու կյանքի չորս փուլերի (մանկություն, երիտասարդություն, հասունություն, ծերություն) անթերի զուգադրման արդյունք: Նման մի ընտիր բանաստեղծություն էլ տեղ է գտել «Իրիկնահաց» գրքում («Երամն անցավ վերևից»): Այստեղ ևս բնապատկերը պարունակում է հաղորդում մարդկային կյանքի մասին, ընդ որում հերոսը դարձյալ բանաստեղծն է և վերստին՝ մեռնող բանաստեղծը: Բնությունը վեհաշուք քայլերով զգում է իր զավակի վախճանը և արձագանքում հատուկ ծեսով: Ահա այդ բանաստեղծությունն ամբողջությամբ.

Երամն անցավ վերևից,

Ձորը մորմոք է մանում:

Սևեր հագան ստվերի

Ծաղիկները անանուն:

Մեծավորը սարերի՝

Ամպե գլխարկն է հանում:

Շրջվեց գավաթն արևի

Մայրամուտի մառանում...

Ինչ-որ մի տեղ երևի Բանաստեղծ է մահանում:

Մարդկային աշխարհի ու բնության զուգահեռը, բնության անձնավորումը և հողի ու մարդու միասնության գաղափարը առավել ցայտուն է արտահայտվել <<Քարափը>> բանաստեղծության մեջ:

Անձնավորված քարափը հիշեցնում է ժողովրդական մի նահապետի, որ արժանի սեր ու հարգանք է վայելում բոլորի կողմից: Ինչպես նահապետն իր գերդաստանում, քարափն առանձնահատուկ տեղ ունի մանկության ձորում: Նրա շուրջն են հավաքվում բոլոր արարածները:

Ծանր նստել է քարափը ձորում,

Հյուրընկալ տերը մանկության ձորի:

Ծանր նստել է և ամեն մեկին

Իրեն արժանի պատիվ է տալիս:

Վայրի աղավնուն հանգարը վայրի,

Մոլորված ամպին իր քիվն է տալիս,

Խրտնած քարայծին՝ մութն իր քարայրի:

Բանաստեղծը ոչ միայն մարդկային հատկանիշներ է վերագրում քարափին, այլև արտաքնապես նմանեցնում է մարդու: Մացառները հոնքերն են, ամպի ստվերը մորուք է հիշեցնում: Ամբողջության մեջ նա նման է պապին.

Սատանան տանի, ինչ-որ հեռավոր

Նմանություն կա Խաչիպապ պապիս

Եվ այս հյուրընկալ քարափի միջև:

Մարդուց փոխառված դրական հատկանիշները՝ բարությունը, հյուրընկալությունը, որ վերագրվում են քարափին, բնութագրում են նաև մարդուն:

Մանկության ձորի քարափը սոսկ բնության բեկոր չէ, այն նաև ծննդավայրի, հայրենի հողի ու հայրենիքի խորհրդանիշն է, և այդ է պատճառը, որ բանաստեղծի համար նման քարափ աշխարհում չկա, այն եզակի է, ինչպես հայրենի հողը: Քարափը նաև անսասան է ու հավերժական, հողի ու հայրենիքի պես դիմակայում է հավերժական ժամանակին.

Ժամանակն այսպես գալիս է, գնում,

Եվ տարու վրա ծալվում է տարին,

Ու խեղճ քարափը մենակ չի մնում,

Խորհի՝ թե ինչ է տալու աշխարհին:

Քարափը բնության մարդեղինացման գագաթնակետն է:

Մարդը բնության զավակն է, և պատահական չէ մարդուն պորտալարով բնությանը կապված սերունդների կենսագրության մեջ դիտելու այն սկզբունքը, որ պայմանավորում է Սահյանի <<Պապը>> բանաստեղծության հերոսի ընտրությունը: ....Իմ պապը վարել է,

Իմ պապը ցանել է,

Իսկ հնձի ժամակ

Ձեռքի մեջ մանգաղի

Դաստակը ցավել է:

Մի օր էլ,երբ հանկարծ

Ծալվել են ծնկները,

Ջարմանքից քարացել,

Ամոթից շիկնել է:

Թողել է նա մանը

Եվ շունչը պահել է,

Եվ հետո քրտինքը

Ճակատին պաղել է:

Եվ պապը ակոսում

Պառկել ու քնել է,

Խառնվել այն հողին,

Որ իրեն սնել է:

Սահյանի հերոսը մահն ընդունում է լուռ: Այն նրա համար միայն տեղափոխություն է: Նա գնում է ձուլվելու իրեն ծնած, սնած բնությանը:

Եզրակացություն

Մեզնից յուրաքանչյուրն իր Սահյանն ունի: Ամեն մեկը, ով քիչ թե շատ պոեզիա է սիրում ու հասկանում, պոետին յուրովի է բացահայտում: Ես էլ իմ Սահյանն ունեմ՝ մեր պոեզիայում մեծագույն բնանկարիչ Համո Սահյանը հղկված ադամանդ է, և որ կողմից էլ նայում ես՝ փայլում-շողշողում է: Նրա պոեզիայում ստվերներ չկան, ամբողջովին լույս է: Բնությունն է նրա ամենահարազատ տարերքը, և հատկապես այստեղ է նա հզոր և անմրցակից: Չեմ կարող չասել, որ, այնուամենայնիվ, նրա բանաստեղծական տան համար ամենաշատ օգտագործված շինանյութը արևից խանձված, անձրևից ու հողմերից ծեծված-թրծված քարերն ու քարափներն են, որոնք հղկել, գոհարների փայլ է տվել Համո Սահյանը, կառուցել է բանաստեղծական իր սրբազան տաճարը, որի անունն է Հայաստան:

Պոետի իմաստուն խոսքը միաժամանակ պարզ է ու հասարակ՝ ինչպես բնությունը իր լուսաբացներով, ծիածաններով, իրար պոգահարող ամպերով, մայրամուտից առաջ շիկնած ու հևացող քարափներով, անդունդի վրա կախված ու ժայռի ծիծ կերած մասրենու թփով: Այդուհանդերձ, Սահյանի խոսքը խոր ու անհատակ է՝ ինչպես մարդկային հոգին իր հազար ու մի գաղտնարաններով:

Սահյանական պոեզիայում Հայաստանի քարերը ոչ թե ծանր ճակատագիր են, ոչ թե անեծք, այլ օրհնանք են, քարե աղոթք են, անսասան հիմք են ու արծվաթռիչք, քարե սիմֆոնիա, թև-թիկունք, տուն-ամրոց են, մեր... փրկությունը: Եվ ամենագլխավորը. Սահյանի բանաստեղծությունները լավատեսություն են ճառագում: Նրանց հեղինակը մարգարեաբար համոզված է, որ Հայաստանի գարունները, նրա բոլոր դարերը հայերեն են գալու:

Այս թեման կնպաստի սովորողների ինքնահանաչողությանը, արժեհամակարգի ձևավորմանը և՛ հիմնական, և՛ ավագ դպրոցում, քանզի բնությունն ազնվացնում է մարդուն, սրբագործում նրա էությունը: Հարկավոր է վերանայել մարդու վերաբերմունքը բնության հանդեպ, հոգատարությամբ վերաբերվել յուրաքանչյուր քարին ու թփին, քանի որ առանց բնության մարդը ապրել և գոյատևել չի կարող:

Կարծում եմ, որ նման մոտեցումը կնպաստի սովորողների մշակութային կարողունակության զարգացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Սահյան Հ. Ս. <<Երկերի ժողովածու 2 հատորով>> 1984թ.
2. Ս. Աղաբաբյան << Դասականներ և ժամանակակիցներ>> 1986թ.
3. Ս. Աթաբեկյան <<Բառի կեցության խորհուրդը>> 1988թ.
4. Haymard.am
5. Համո Սահյան <<Կանչե՛ կռո՛ւնկ>> 1973թ.
6. Համո Սահյան <<Տոհմի կանչը>> 1981թ.

7. Համո Սահյան <<Սեզամ բացվի՛ր>> 1972թ.